

Սուսաննա Գ. Հովհաննիսյան
ՀՀԱԱ Մ.Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԸ ԵՎ
ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Բանալի բառեր - Ակսել Բակունց, Հովհաննես Թումանյան, լեզվաբանական հայացքներ, հայոց լեզու, լեզվի զարգացման ուղիներ, Հայաստանի գրողների միություն, գրական լեզու, գրաբար:

20-րդ դարասկզբին հայ ազգային գրականության զարգացմանը նախանձախնդիր գրողներն ու ժամանակի անվանի բանասերները մտահոգված էին հայոց լեզվի մաքրության, նրա զարգացման, գրական և հատկապես գեղարվեստական լեզվին, լեզվական տարբեր ոճերին, ուղղագրությանը վերաբերող խնդիրներով: Պարբերական մամուլի էջերում, Հայ գրողների կովկասյան ընկերության ամբիոնում ծավալվում էին գրական ասուլիսներ, բանավեճեր, որոնց նյութն էր բառապաշարի հարստացման աղբյուրների, բարբառների ու ժողովրդախոսակցական լեզվի դարձվածքային և արտահայտչական ձևերի, գրական լեզվի մեջ փոխառությունները, բարբառային արտահայտությունները որչափ և ինչպես գործածելու հարցերը: Խորհրդային շրջանին նախորդող երկու տասնամյակներում, մասնավորապես 1910-ական թթ. իրենց լեզվագիտական հայացքների բարձրաձայնմամբ և հանրայնացմամբ աչքի ընկան լեզվաբաններ և բանասերներ Մանուկ Աբեղյանը, Արտաշես Աբեղյանը, Արշակ Մեղրյանը, Մամբրե Մատենճյանը, Ստ. Մալխասյանը, գրողներ Հովհաննես Թումանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Շիրվանզադեն, Վահան Տերյանը, Դերենիկ Դեմիրճյանը և այլք¹:

Լեզվագիտական խնդիրները Հայաստանի սովետական գրողների ! համագումարում Ա. Բակունցի արտասանած ելույթում

1 Լեզվաբանական խնդրի շուրջ 20-րդ դարասկզբի բանավեճերի մասին հանգամանորեն տե՛ս **Հովհաննիսյան Ս. Գ.** «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմությունը (1900-1912 թթ. գիտական կենսագրություն)» Եր., 2012, «Գրական Էտալոն» հրատ., էջ 485-493: Ինչպես նաև Նույն հեղինակի «Հայ գրական ընդհանուր համագգային լեզվի մշակման հարցի շուրջ» ուսումնասիրությունը. տե՛ս **Հովհաննիսյան Ս.Գ.** «Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը», Եր., 2007, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 204-211:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո լեզվի զարգացման խնդրում իրենց մեծ նախորդների մտահոգությունները բացի ժամանակի լեզվաբանների ուսումնասիրություններից՝ արտահայտվեցին հայ գրողներից մասնավորապես Եղիշե Չարենցի ու Ակսել Բակունցի բանավոր ու գրավոր ելույթներում ու հոդվածներում: Այս իմաստով առանձնանում է Բակունցի «Հայաստանի Սովետական գրողների առաջին համագումարում արտասանած ճառը»: Հենց այս ելույթում արտահայտվեցին Բակունցի լեզվագիտական հայացքները:

Լեզվի խնդրում Բակունցը զգալի չափով թումանյանական ավանդների շարունակողն էր: Հովհաննես Թումանյանի համար բառը մի աշխարհ էր: Բառի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ուներ նաև Բակունցը: Հենց այդ պատճառով էլ Բակունցյան բառը Չարենցի բնորոշմամբ մարմարյա էր, «հնամենի, բուրյան, որպես մեր հին քարաքանդակ մատուռների անջնջելի գրերը հնադարյան»:

Անշուշտ, գաղտնիք չէ, և հայ գրականագիտությունը վաղուց արձանագրել է, որ Բակունցն իր հետ բերեց «ոճային-արտահայտչական -շարահյուսական նոր ձևեր ու եղանակներ... ոսկերչական ասեղնագործական-գորգագործական նուրբ մշակման հասցրեց իր արձակը»¹:

Լեզվի զարգացման, այդ թվում գեղավեստական լեզվի հեռանկարի հարցերը քննարկվեցին Հայաստանի գրողների միության առաջին համագումարում, որը տեղի է ունեցել 1934-ի օգոստոսի 1-5-ը՝ Երևանում: Այդ օրը Չարենցն իր ելույթում անդրադարձավ գեղարվեստական խոսքում հայ գրական երկու լեզուների օգտագործման խնդրին: Որոշ հարցերում Բակունցը համաձայն չէր Չարենցի առաջադրած դրույթներին: Նրա վստահեցմամբ՝ գրական լեզվի երկու ճյուղերի ապագայի մասին Չարենցի մոտեցումները հիմնվում են Վ. Տերյանի լեզվաբանական հայացքների վրա: Իբրև հավաստում Բակունցը մեջբերում է հատվածներ Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» հոդվածից²: Արձակագիրն ու շաղկապն է արժանացնում Տերյանի հոդվածի ոչ թե գրական լեզվի արևմտահայ և արևելահայ ճյուղավորումների մասին հատվածը, այլ արևելահայերենի զարգացման ճանապարհի մասին արծարծումները՝ առանձնացնելով մի կողմից գրական ընդհանուր լեզուն, մյուս կողմից՝ խաչ. Աբովյանի, Պ. Պոռոչյանի, Ղ. Աղայանի ու Հովհ. Թումանյանի անհատական ոճն ու լեզուն³: Միաժամանակ Բակունցը անդրադարձ է կատա-

1 Սուրեն Աղաբաբյան, «Ակսել Բակունցի արձակի նշանակությունը», **Աղաբաբյան Ս.** «Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր», Եր., 1982, «Սովետ գրող» հրատ., էջ 73:

2 **Վահան Տերյան**, Երկերի ժողովածու չորս հատորով, հտ. 3, Եր., «Հայաստան» հրատ., 1975, էջ 48-102:

3 Նույն տեղում, էջ 85: Տե՛ս նաև **Ա. Բակունց**, Երկեր երկու հատորով, հտ.2, Եր.,

րում Ստ. Նազարյանի, Մ. Նալբանդյանի, Ս. Շահագիզի, Գ. Սունդուկյանի լեզվի յուրահատկությունների տերյանական գնահատականներին: Բանավեճը ծավալվում է մի կողմից Բակունցի մյուս կողմից՝ Տերյանի ու Չարենցի միջև մասնավորապես Թումանյանի լեզվի, նրա կենսունակության ու ապագայի հետ կապված խնդիրներն արծարծելիս: Ըստ Տերյանի՝ Թումանյանի լեզուն ապրել էր զարգացում խրթին բարբառաբանություններով լեզվից գնալով դեպի բյուրեղացում և գրական լեզու, և բարբառներից ազգային բանաստեղծը վերցրել էր այն, ինչ չկար գրական լեզվում, այսինքն՝ կանգնել էր «ուղիղ ճանապարհի վրա»¹: Իսկ Չարենցը հենց զավառական բառերի ու գրական լեզվի միաձուլվածքն էր անվանում «Թումանյանի լեզու» և կարծում էր, որ այդ լեզուն ունի «գյուղական ինտոնացիա» և գրական լեզվի հետագա զարգացմամբ պայմանավորված «պատմականորեն դատապարտված է մահվան»² (ընդգծումը հեղինակինն է. Ս.Հ.): Իբրև հակադրություն Չարենցի այս տեսակետի՝ Բակունցը դարձյալ վկայակոչում է Տերյանին, ով վստահեցնում էր, թե «Թումանյանը իր լեզուն հասցրել է այն բյուրեղաման պարզության, որը մոտեցնում է նրան Պուշկինին, և որը նրա գերագույն արժեքներից մեկը պիտի համարվի»³: Բակունցն ընդգծում է նաև Թումանյանի հռչակավոր «Էս ու էն»-ի մասին տերյանական այն ձևակերպումը, թե դրանք «այս ու այնի հանդեպ մեր գրականության մեջ առանձին բարբառների գործածության վերջին զինվորներն են, վերջին բերդերն են և... շատ խարխուլ ու անհաստատ բերդերը»⁴: Բակունցը հակադրվում է Թումանյանի լեզվին տված թե՛ Չարենցի, թե՛ Տերյանի գնահատականներին: Նա համաձայն է Չարենցի հետ, որ պետք է դնել մաքուր լեզվի, կենսորոնաձիգ լեզվի խնդիրը, սակայն ի տարբերություն մեր գրականության երկու մեծերի՝ կարծում է, որ «Այդ լեզուն խարսխված պետք է լինի ժողովրդական լեզվի վրա»⁵: Եվ առավել կարևոր ու ժամանակի համար համարձակ հայտարարություն է անում այսպես կոչված «Հոկտեմբերյան հեղափոխության հայրենիքի լեզվի» զարգացման գործում թումանյանական ավանդների կարևորության մասին: Բակունցն ասում է. «Մենք պետք է ուսումնասիրենք Թումանյանի լեզուն, հասկանանք, թե իր ժամանակին Թումանյանն ինչպես է կարողացել օգտագործել բարբառները և ժողովրդական լեզուն, գրաբարը, զանազան պատկերներ և այլն, և ստեղծել այնպիսի

1964, Հայպետհրատ, էջ 592:

1 **Վ. Տերյան**, նշվ. աշխատությունը, էջ 88:

2 **Չարենց**, Գրականության մասին, Եր., 1957, էջ 195:

3 **Վ. Տերյան**, նշվ. աշխատությունը, էջ 89:

4 Նույն տեղում:

5 **Բակունց**, նշվ. աշխատ., էջ 598:

լեզու, որ հանդիսանում է, ես կասեի, նախահոկտեմբերյան պոեզիայի լեզուն: Այսպիսով, Թումանյանը դառնում է այդ լեզվի նախահայրը, քանի որ Թումանյանը այս տեսակետից ավելի շատ տվյալներ ունի օգտակար լինելու, քան Տերյանի լեզվաշինարարության փորձը»¹:

Բակունցը նկատի ուներ ժողովրդական լեզվի գանձարանից ճաշակով, անգերազանցելի վարպետությամբ օգտվելու Թումանյանի ունակությունը, որը շատ բարձր էր գնահատում: Նրա կարծիքով Ամենայն հայոց բանաստեղծը նաև լեզվի խնդրում այն օրինակն էր, որից պետք է իր ժամանակակից գրողները սովորեին, թե ինչպես պետք է ժողովրդական խոսքից կարողանալ վերցնել բառեր, սեղմ, պատկերավոր ոճեր, դարձվածքներ, պարզ ու գեղեցիկ ձևեր:

Համագումարի ամբիոնից Բակունցն արձանագրում է, որ «լեզվի դիսպուտների» ընթացքում անարդարացիորեն՝ նրա բնորոշմամբ «գիտակցաբար թե անգիտակցաբար» շրջանցվում է գրաբարի դերը լեզվի զարգացման գործում: Բակունցի կարծիքով գրաբարի բառապաշարը կարող է հարստացնող աղբյուր հանդիսանալ, հետևաբար և չպետք է անուշադրության մատնել նրա հնարավորությունները: Սակայն Բակունցը գրաբարյան բառաձևերի կիրառությունը դիտում էր միայն ժողովրդական խոսքի հետ ներդաշնակ միաձուլման ճանապարհով, ինչն իր հերթին պայմանավորում էր հենց ժողովրդական խոսքում գրաբարյան բառ ու բանի, ձևերի հայտնաբերմամբ:

Բակունցն ասում է. «Հարց է առաջ գալիս՝ ի՞նչ ասպարեզում և ի՞նչ չափով կարելի է օգտագործել գրաբարը: Ես կարծում եմ, որ այն կարելի է օգտագործել պետականության, փիլիսոփայության և ռազմական տերմինալոգիայի ասպարեզում և ապացուցված է, որ այս ուղղությամբ օգտագործված գրաբարը դրական հետևանքներ է տալիս»²:

Բակունցը, չլինելով լեզվաբան, չունենալով այդ ոլորտում որևէ ուսումնասիրություն, այնուամենայնիվ, միանգամայն ճիշտ էր ընկալում մեռած լեզվի հնարավորությունների սահմանը: Այդ պատճառով էլ նա նկատում է. «Իսկ եթե գրաբարով փորձում ենք նկարագրել բնությունը, այս կամ այն երևույթը մեր գրվածքներում, տեսնում ենք, որ ունենում է բացասական հետևանք»³: Այնուհանդերձ, Բակունցը կարևորում էր գրաբարի օգտագործման խնդիրը: Իսկ բարբառների օգտագործման խնդրում նա պաշտպանում էր թումանյանական մոտեցումը: Վերջինս իր արտահայտությունն էր գտել բանաստեղծի տարբեր ելույթներում,

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

մասնավորապես նրա «Մի երկու խորհուրդ գավառական մամուլին» (1910) հոդվածում, որը գրվել էր հայոց լեզվի մաքրության, հատկապես գեղարվեստական ոճերի և լեզվագիտական բազմազան խնդիրների շուրջ ծավալված 20-րդ դարասկզբի գրական բանավեճերի համատեքստում: Թումանյանը պայքարում էր լրագրային գրական լեզվի դեմ՝ այն որակելով «աղքատ, չոր ու ցամաք բառերի մի տերողորմյա, անոճ ու անկենդան»¹: Բանաստեղծը գրում է. «Էդ բարբառներից ամեն միևնույնը ավելի շատ ուժ ու կենդանություն ունի իր մեջ, քան մեր եղած գրական լեզուն: Սա դեռ չի կազմակերպված և չի էլ կազմակերպվելու, մինչև որ մեր ժողովրդի լեզուն իր բոլոր դաշտերից, սարերից ու ձորերից կենդանի վտակներով կգա միանալու սրա մեջ, և բոլոր բարբառները հանդես կբերեն իրենց գանձերը»²:

Բակունցը, բարբառները դիտելով լեզվի հարստացման, նրա կենսունակության «բնական ու առողջ» ճանապարհ, գրում է. «Իմ կարծիքով, լեզվաշինարարության խնդրում մենք դժվարությունների ենք հանդիպում առարկաներ անվանելու ուղղությամբ. այսպիսի դեպքերում պետք է ելակետ ունենալ ժողովրդական բարբառը»³:

Այսպես, բարբառների դերի և բնաշխարհիկ գրական լեզվի այսպիսի ընկալմամբ Բակունցը կանգնում է Աբովյանի և Թումանյանի կողքին, մանավանդ Թումանյանի, ով իրավամբ համարվում է «բնական հայոց լեզվի օրհներգուն», ով մերժում էր ազգային լեզվի օրենքներին խորթ ներմուծումները: Լեզվի հարցում Բակունցն ընդունեց թումանյանական դավանանքը՝ այն է՝ լեզվի գործին հաստատ ազգային դրոշմ ու հիմք տալու համար հիմնվել ժողովրդի կենդանի լեզվի, նրա ոգու և օրենքների վրա⁴:

Բակունցը, որ հրաշալի գիտեր՝ որ բառը ինչպես օգտագործել, ուր դնել, որ դրսևորվեին նրա իմաստային բոլոր նրբերանգները, խոսում է առանց բարբառային արտահայտությունների գրական ոճ ձևավորելու դժվարությունների ու նաև անհնարինության մասին: Եվ իբրև արդարացում բարբառներից օտվելու իրավունքի օինակ է բերում Գոգոլի լեզուն: Դիմելով դահլիճին՝ Բակունցն ասում է. «Դուք գիտեք, որ մենք հաճախ այս կամ այն բառը ճիշտ հայերենով գործածելու համար կանգ ենք առնում դժվարությունների առջև, չենք գտնում այն բառը, որն անհրաժեշտ

1 **Հովհ. Թումանյան**, Երկիր լիակատար ժողովածու տասը հատորով, հտ. 6, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր, 1994, էջ 182:

2 Նույն տեղում:

3 **Ա. Բակունց**, Նշվ. աշխատ., էջ 598-599:

4 **Ս. Աղաբաբյան**, «Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր», Եր., 1982, «Սովետ. գրող» հրատ., էջ 75:

Է այս կամ այն սրբությունն արտահայտելու համար: Դուք գիտեք, որ Գոգոլի ստեղծագործությունների մեջ փոքր, փոքրիկ և այլ գավառական բառերը ունեն իրենց հատուկ իմաստը»¹:

Սրանով Բակունցն արտահայտում է իր գեղագիտական դավանանքի մեջ լեզվի հարցում ժողովրդական ուղղությանը հատկացրած որոշիչ դերը: Ըստ գրականագետ Ս. Աղաբաբյանի՝ եթե այլ գրողների համար ժողովրդական բարբառների կամ խոսակցական լեզվի կիրառումը կապված էր միջավայի կոլորիտի կամ «ազգագրական «օրնամենտի խնդիրների լուծման», համապարփակ գեղարվեստական խնդիրներ հետ, ապա «Բակունցը նույն այդ ուղղության հետ կապեց ավելի լայն ոճական ուղման և ժանրական ուղման նոր սկզբունքների հայտնագործումներ»²:

Անկախ այն հանգամանքից, որ 1934թ. համագումարի իր այս ելույթում Բակունցը ուներ տարածայնություններ Չարենցի հետ, այնուամենայնիվ, նա իր հիացմունքն է արտահայտում Չարենցի լեզվի նկատմամբ՝ միաժամանակ ամուր կանգնելով բարբառների կարևորության և այս իմաստով Թումանյանի լեզվի օրինակելի լինելու իր առաջադրած դրույթի պաշտպանության դիրքերում: Բակունցը նկատում է. «Ես, դժբախտաբար, մեր գրողների մեջ չեմ գտնում այնպիսին, որ լեզվի տեսակետից օրինակելի լիներ, բացի ընկ. Չարենցի լեզվից, և այդ պատիվը պատկանում է մեր մեծ գրող Չարենցին:

Բացասական այն նիվիիլիոական, որի մասին ընկ. Չարենցը խոսում էր իր գեկուցման մեջ, առաջ է բերում լեզվի խառնվածություն, լեզվի թլվատություն և այլն: Այնպես որ, պետք է բարբառները կշռել դատական կշռքի ճշտությամբ և վարվել այնպես, ինչպես այդ անում են ռուսական գրողները... Նրանք վերցնում են ժողովրդական մի արտահայտություն, մեկնաբանում այդ արտահայտության օրենքը, և հետո իրենք այդ օրենքի հիման վրա կառուցում այն նոր բառը, որն անհրաժեշտ է ստեղծել: Այս տեսակետից Թումանյանի փորձը շատ ուսանելի է մեզ համար»³:

Իհարկե, այստեղ հայ գրական լեզվում բարբառներին տեղ տալու խնդրում ռուս գրողներին ու ռուսական գրականությանն ընթրօրինակելու մոտեցումը բխում էր ժամանակի պահանջից, ինչը չէր կարող չարտահայտվել համագումարում հնչած յուրաքանչյուր ճառում, եթե նկատի ունենանք, թե ինչպիսի ուշադրություն կար գրողների գրական ասուլիսների, ցանկացած բանավեճի նկատմամբ ստալինյան բռնապետության

1 Ա. Բակունց, Նշվ. աշխատ., էջ 599:

2 Ս. Աղաբաբյան, Նշվ. աշխատ., էջ 75:

3 Նույն տեղում, էջ 600:

պայմաններում: Դրանով է պայմանավորված նաև Նույն ճառում «Հոկտեմբերյան լեզու» եզրույթի շուրջ տարածայնությունը արձակագրի ու բանաստեղծի միջև: Եզրույթն արտաբերելիս Չարենցը տեղից բացական է «Դա տերմին է»¹, իսկ Բակունցը հակադարձել է. «Հենց թեկուզ որպես տերմին էլ չի կարելի գործածել»²:

Ժամանակի պարտադրանքից էր բխում նաև Տերյանի՝ այն դրույթի քննադատությունը, ըստ որի հայոց լեզուն պիտի զարգանա եվրոպական լեզուների ճանապարհով: Թեև Բակունցը քննադատում է Տերյանին՝ ընդգծելով, որ նա լեզվի խնդրին մոտենում է «բուրժուազիայի պրոգեսիվ դերի պաշտպանության դիրքերից», սակայն միաժամանակ փորձում է նրան արդարացնել՝ նշելով, որ «Այդ ժամանակ մեր գրողները դեռևս գաղափար չունեին պրոլետարական հեղափոխության մասին»³: Իհարկե, այս բնորոշումներում «բուրժուազիայի, պրոլետարական», վերստին գեղիչում է «ժամանակի շունչը»:

Այս համատեքստում պետք է դիտել նաև գրական լեզվի հարստացման աղբյուրների հարցում ռուսերենին տված բացառիկ դերը: Բակունցը հայտարարում է. «Փոխառությունների ասպարեզում մենք ավելի իրավունք ունենք վերցնելու ռուսական լեզվից, քան մեկ ուրիշից»⁴: Կարծում ենք այս դրույթի առաջադրումն էլ քաղաքական կաշկանդումների արտահայտություն էր: Ժամանակին, երբ բարբառներից օգտվելու և արևելյան լեզուներից փոխառություններն օգտագործելու համար Թումանյանին հռչակում էին հանցագործ և ներկայացնում «թրքամոլության» մեղադրանք՝ «ջանի պոչից կախ ընկնելու»⁵ համար, Թումանյանը համարձակորեն պատասխանում էր. «Հայոց լեզվի կազմության խնդրում էն զիջումը, որ Դուք ականա անում եք կուլտուրական Արևմուտքի առաջ, ես ուրախությամբ էն գլխից արել եմ և անում եմ թե՛ Արևմուտքի և թե՛ մանավանդ Արևելքի ու մեր ժողովրդական բարբառների առջև»⁶:

Եվ այսպես, հայ 20-րդ դարասկզբի գրական կյանքում լեզվի մաքրության, նրա զարգացման բազմաբնույթ խնդիրների շուրջ ծավալված համահայկական քննարկումներից ու գրական լեզվի կայացման համար պայքարից երկու տասնամյակ անց Բակունցը նախապատվությունը տալիս էր Թումանյանի մատնանշած ուղուն, այսինքն՝ գրական ու գեղարվեստական այնպիսի լեզվի ձևավորմանը, որի խորհուրդն ու իմաս-

1 Նույն տեղում, էջ 596:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:

5 «Հորիզոն» թերթ, Թիֆլիս, 1910, թիվ 205, սեպտեմբերի 15:

6 Թումանյան, հտ 6, էջ 488:

տը միայն մեկը պետք է լինի «խոսել հայ մարդու, հայ ժողովրդի սրտին»¹:

Եթե հաշվի առնենք, որ 1934թ.-ն էր, և ազգայինը այնքան էլ չէր խրախուսվում, ապա Բակունցը հայոց լեզվի զարգացման ուղիները նշելիս Հայաստանի Սովետական գրողների առաջին համագումարում արտասանած իր ճառում բավական համարձակ էր և մտահոգ ազգային մշակույթի ու գրականության հենք ու հենարան հայերենի ապագայի խնդիրներով: Բակունցի՝ գրողների համագումարում հնչեցրած ելույթը, ինչպես և նրա ողջ ստեղծագործությունը վկայում է, որ լեզվի հարցում նույնպես գրողի մոտեցումներում արտահայտվել է ազգային ավանդների շունչը:

Սուսաննա Գ. Հովհաննիսյան - ՀՀԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, Գրականության և գեղարվեստի միջազգային ակադեմիայի անդամ (2015-ից), 12 մենագրությունների և ավելի քան 200 տպագիր հոդվածների, ուսումնասիրությունների ու հրապարակումների հեղինակ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը հայ մշակույթի և գրականության պատմություն, մասնավորապես դասական գրականություն: Գիտահետազոտական ուսումնասիրությունների զգալի մասի նվիրված է թումանյանագիտության խնդիրներին:

SUSANNA HOVHANNISYAN - AKSEL BAKUNTS AND WAYS OF DEVELOPMENT OF THE NATIONAL LANGUAGE - Linguistic views of Aksel Bakunts were expressed, in particular, in August 1934, in his speech at the first founding congress of the Writers' Union of Armenia. In the discussion about the ways of development of the Armenian language, Bakunts defended Tumanyan's approaches and emphasized the need to follow the path indicated by the poet. In matters of language development, Bakunts was the successor of the Tumanyan's traditions. On this issue he had disagreements with both V. Teryan and E. Charents. In the issue of the development of the Armenian literary language, A. Bakunts devoted a decisive role to the popular direction, proposing to rely on the living language of the people, on its spirit and laws, using both dialect words and the words of the ancient Armenian language of grabar in the literary language.

Key words - Aksel Bakunts, Hovhannes Tumanyan, Linguistic views, ways of language development, Armenian language, Writers' Union of Armenia, literary language, grabar.

СУСАННА ОВАНЕСЯН - АКСЕЛЬ БАКУНЦ И ПУТИ РАЗВИТИЯ НАЦИОНАЛЬНОГО ЯЗЫКА - Языковедческие взгляды Акселя Бакунца были

1 Նույն տեղում, էջ 240:

выражены, в частности, в августе 1934 г., в его речи на первом, учредительном съезде Союза писателей Армении. В дискуссии о путях развития армянского языка Бакунц отстаивал подходы Туманяна и подчёркивал необходимость идти по пути, указанному поэтом. В вопросах развития языка Бакунц был продолжателем туманяновских традиций. По этому вопросу у него были разногласия и с В. Терьяном, и с Е. Чаренцем. В вопросе развития армянского литературного языка А. Бакунц уделял решающую роль народному направлению, предлагая опираться на живой язык народа, на его дух и законы, используя в литературном языке как диалектные слова, так и слова древнего армянского языка грабара.

Ключевые слова – Аксель Бакунц, Ованес Туманян, языковедческие подходы, пути развития языка, армянский язык, Союз писателей Армении, литературный язык, грабар.

REFERENCES

- **Hovhannisyan S. G.**, “Hovhannes Tumanyani kyanki ev steghcagorcutyan patmutyun (1900-1912 tt. Gitakan kensagrutyun)”, Yerevan, “Grakan etalon”, 2012 (in Armenian)
- **Hovhannisyan S. G.**, “Tumanyann ev Hay Groghneri Kovkasyan Inkerutyunn”, Yerevan, “Gitutyun”, 2007 (in Armenian)
- **Aghababyan S. B.**, “Hodvacner, dimankarner, husher”, Yerevan, “Sovetakan grogh”, 1982 (in Armenian)
- **Vahan Teryan**, Erkeri zhoghovacu chors hatorov, hator 3, Yerevan, “Hayastan”, 1975 (in Armenian)
- **Aksel Bakunts**, Erker erku hatorov, hator 2, Yerevan, “Haypethrat”, 1964 (in Armenian)
- **Eghishe Charents**, “Grakanutyun masin”, Yerevan, “Haypethrat”, 1957 (in Armenian)
- **Hovhannes Tumanyan**, Erkeri liakatar zhoghovacu tas hatorov, hator 6, Yerevan, “Gitutyun”, 1994 (in Armenian)
- **“Husher Eghishe Charentci masin”**, Yerevan, “Sovetakan grogh”, 1986 (in Armenian)
- **“Horizon”** tert, Tiflis, 1910 (in Armenian)